ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թվականի N 16 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և համայնքային ծառայողների մրցույթ անցկացնելու համար թեստեր կազմելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N11-Ն հրամանը

որոշում եմ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց մրցույթ անցկացնելու հարցաշարերը՝ համաձայն 1-3 հավելվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Եղեգիս համայնքի ղեկավարի

29-ը հունվարի 2020թ. թիվ 16 Ա որոշման

Հարց 1

Համայնքային ծառայության հետ կապված հարաբերությունները ո՞ր իրավական ակտերով են կարգավորվում.

1) միայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և ՀՀ Նախագահի հրամանագրերով,
2) ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև նորմատիվ իրավական այլ ակտերով,
3) միայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության նորմատիվ իրավական ակտերով:

(2) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 2

Ո՞ր մարմինն է քննության առնում մրցույթի հրապարակված արդյունքների վերաբերյալ գրավոր բողոքը.

1) ՀՀ արդարադատության նախարարությունը,
2) համապատասխան մարզպետարանը, Երևան քաղաքում՝ քաղաքապետարանը,
3) համայնքի ղեկավարը,
4) ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

(4) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 3

Նշվածներից ո՞ր լիազորություններն ունի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողը որոշումներ կայացնելու լիազորությունների առումով.

1) մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կայացմանը,
2) լուծում է հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ և տալիս հանձնարարականներ,
3) մասնակցում է միայն որոշումների կայացմանը:

(2) («Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ փոխվարչապետ, ՏԿՆ 04.12.2008թ. թիվ 04-Ն հրամանի հավելվածի կետ 7, ենթակետ «բ»)

Հարց 4

Նշվածներից ո՞ր լիազորություններն ունի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողը՝ իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում, որոշումներ կայացնելու լիազորությունների առումով.

1) լուծում է հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ և տալիս հանձնարարականներ,
2) մասնակցում է որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը, ինչպես նաև իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ լուծում է հիմնախնդիրներ,
3) լուծում է միայն հիմնախնդիրներ:

(2) («Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ փոխվարչապետ, ՏԿՆ 04.12.2008թ. թիվ 04-Ն հրամանի հավելվածի կետ 8, ենթակետ «բ»)

Հարց 5

Նշվածներից ո՞ր լիազորություններն ունի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողը խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման առումով.

1) մասնակցում է բարդ խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին,
2) մասնակցում է միայն բարդ խնդիրների բացահայտմանը և դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին,
3) իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է մասնագիտական և կազմակերպական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ:

(3) («Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ փոխվարչապետ, ՏԿՆ 04.12.2008թ. թիվ 04-Ն հրամանի հավելվածի կետ 7, ենթակետ «դ»)

Հարց 6

Նշվածներից ո՞ր լիազորություններն ունի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողը՝ իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման առումով.

1) մասնակցում է խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին,

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ,
3) վերլուծում է միայն մասնագիտական նշանակության բարդ խնդիրներ:

(1) («Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ փոխվարչապետ, ՏԿՆ 04.12.2008թ. թիվ 04-Ն հրամանի հավելվածի կետ 9, ենթակետ «դ»)

Հարց 7

Նշվածներից ո՞ր դասային աստիճանն է շնորհվում համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողներին.

1) ՀՀ համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան,
2) ՀՀ համայնքային ծառայության 1-ին դասի գլխավոր խորհրդականի դասային աստիճան,
3) ՀՀ համայնքային ծառայության 1-ին դասի պետական խորհրդականի դասային աստիճան,
4) ՀՀ համայնքային ծառայության գլխավոր խորհրդականի դասային աստիճան:

(1) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 8

Ե՞րբ է շնորհվում գլխավոր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված համայնքային ծառայության ավելի բարձր դասային աստիճանը.

1) կարող է շնորհվել ոչ շուտ, քան համայնքային ծառայության տվյալ խմբի տվյալ ենթախմբի պաշտոնը՝ սույն օրենքով նախատեսված համապատասխան դասային աստիճանով, երեք տարի անընդմեջ զբաղեցնելուց հետո,
2) համապատասխան դասային աստիճանն ստանալուց ոչ շուտ, քան երեք տարի, և ոչ ուշ քան հինգ տարի հետո,
3) համապատասխան դասային աստիճանն ստանալուց ոչ շուտ, քան երկու տարի, և ոչ ուշ քան չորս տարի հետո,

(1) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 9

Ի՞նչ կարգով կարող է մեկ աստիճանով իջեցվել համայնքային ծառայության ավելի բարձր դասային աստիճանը.

1) միայն համապատասխան համայնքի ղեկավարի ցանկությամբ,

2) միայն որպես «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգապահական տույժի կիրառում,
3) միայն ատեստավորման արդյունքում,
4) դատական կարգով:

(2) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 10

Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրի հիման վրա ո՞վ է հաստատում համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը.

1) համապատասխան համայնքի ավագանին,
2) ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը,
3) համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը,
4) համապատասխան համայնքի ղեկավարը:

(4) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 11

Ե՞րբ կարող է փոփոխվել համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը.

1) համայնքային ծառայողի համաձայնությամբ,
2) համայնքային ծառայողի և համայնքի ղեկավարի փոխհամաձայնությամբ,
3) եթե դա տվյալ պաշտոնն զբաղեցնող համայնքային ծառայողի համար չի առաջացնում այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստումից հետո,
4) եթե դա տվյալ պաշտոնն զբաղեցնող համայնքային ծառայողի համար չի առաջացնում այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել ատեստավորումից հետո:

(3) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 12

Նշվածներից ո՞վ իրավունք չունի զբաղեցնել համայնքային ծառայության պաշտոն.

1) այն անձը, որը դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
2) ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձը,
3) անաշխատունակ կամ սահմանափակ աշխատունակ անձը:

(1) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 12)

Հարց 13

ՀՀ մարզերի (մինչև 15000 բնակչություն ունեցող) համայնքներում ովքե՞ր են ընդգրկվում մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում.

1) համապատասխան համայնքի հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք,
2) համապատասխան համայնքի բնակիչներից, ինչպես նաև մարզպետարանի առաջարկած ներկայացուցիչները,
3) համապատասխան համայնքի ավագանու երեք անդամ, ինչպես նաև մարզպետարանի ներկայացուցիչներ,
4) համապատասխան համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու մինչև հինգ անդամներ և մարզպետարանի երեք ներկայացուցիչ:

(4) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 14

Տվյալ համայնքի ղեկավարը ե՞րբ է հրապարակում համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար համապատասխան մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը.

1) մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան երկու ամիս առաջ,
2) մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան քսանհինգ օր առաջ,
3) մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ,
4) մրցույթն անցկացնելու օրը:

(3) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 15

Նշվածներից ո՞վ է իրականացնում համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքները.

1) համայնքապետարանի աշխատակազմը,
2) ավագանու անդամներից կազմված աշխատանքային խումբը,
3) մարզպետարանը,
4) մրցութային հանձնաժողովը:

(1) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 16

Օրենքով սահմանված կարգով ո՞վ է իրավասու անձին չթույլատրել մասնակցելու համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին.

1) համայնքի ղեկավարը,
2) համայնքապետարանի աշխատակազմը,
3) մրցութային հանձնաժողովը,
4) մարզպետարանի աշխատակազմը:

(3) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 17

Մրցութային հանձնաժողովը հարցազրույցի միջոցով յուրաքանչյուր մասնակցի գործնական կարողությունները բալային ի՞նչ համակարգով է գնահատում և ո՞րն է նվազագույն դրական գնահատականը.

1) 18 բալային համակարգով և նվազագույն դրական գնահատականը 8 բալն է,
2) 5 բալային համակարգով և նվազագույն դրական գնահատականը 3 բալն է,
3) 20 բալային համակարգով և նվազագույն դրական գնահատականը 7 բալն է,
4) 20 բալային համակարգով և նվազագույն դրական գնահատականը 8 բալն է:

(2) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 18

Ի՞նչ ժամկետում և ինչպե՞ս է անցկացվում կրկնակի մրցույթը.

1) մեկամսյա ժամկետում՝ ընդհանուր հիմունքներով,
2) 10-օրյա ժամկետում՝ ընդհանուր հիմունքներով,
3) 10-օրյա ժամկետում՝ նոր դիմումների ընդունմամբ,
4) երկամսյա ժամկետում՝ ընդհանուր հիմունքներով:

(2) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 19

Մրցույթում հաղթող ճանաչված անձանցից ո՞վ է պաշտոնում նշանակում համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբում.

1) համայնքի ղեկավարը,
2) համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը, իսկ աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման աուդիտորներին՝ համայնքի ղեկավարը,
3) համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
4) համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու համաձայնությամբ:

(2) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 15)

Հարց 20

Ո՞ր մարմինն է սահմանում համայնքային ծառայողի հետ ժամկետային աշխատանքային պայմանագրի կնքման կարգը.

1) ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը,
2) ՀՀ կառավարությունը,
3) համապատասխան համայնքի ղեկավարը,
4) համապատասխան համայնքի ղեկավարը՝ օրինակելի կարգի հիման վրա:

(2) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 18)

Հարց 21

Ի՞նչ պարբերականությամբ է անցկացվում համայնքային ծառայողի հերթական ատեստավորումը.

1) տարին մեկ,
2) երկու տարին մեկ,
3) երեք տարին մեկ,
4) հինգ տարին մեկ:

(3) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 19)

Հարց 22

Ո՞վ է սահմանված կարգով կազմում ատեստավորման թեստերը, անցկացնում հարցազրույցը և գնահատում արդյունքները.

1) համապատասխան համայնքի ղեկավարը,
2) համապատասխան համայնքապետարանի աշխատակազմը,
3) ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը,
4) ատեստավորման հանձնաժողովը:

(4) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 19)

Հարց 23

Ի՞նչ ժամկետում է ատեստավորման հանձնաժողովը համայնքային ծառայողին պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում ատեստավորման արդյունքները.

1) ատեստավորման օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում,
2) ատեստավորման օրվանից հետո՝ երկօրյա ժամկետում,
3) ատեստավորման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում,
4) ատեստավորման օրվանից հետո՝ նույն օրը:

(3) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 19)

Հարց 24

Ի՞նչ հիմքով է անցկացվում համայնքային ծառայողի արտահերթ ատեստավորումը.

1) նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի պատճառաբանված որոշման հիման վրա,
2) ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի որոշման հիման վրա,
3) համապատասխան մարզպետի պատճառաբանված որոշման հիման վրա,

(1) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 19)

Հարց 25

Ո՞ր դեպքում է համայնքային ծառայողին արգելվում համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) հետ.

1) եթե նրանց ծառայությունը իրականացվում է նույն կառուցվածքային ստորաբաժանումում,
2) եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ,
3) եթե նրանց ծառայությունը կրում է անուղղակի ենթակայության բնույթ:

(2) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 24)

Հարց 26

Նշվածներից ի՞նչ կարգով են լուծվում համայնքային ծառայության մասին օրենսդրության կիրառման հետ կապված վեճերը.

1) միայն համայնքի ղեկավարի սահմանած կարգով,
2) համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի համատեղ հաստատած կարգով,
3) համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև դատական կարգով:

(3)(«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 36)

Հարց 27

Նշվածներից ո՞ր լիազորությունն ունի համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 1-ին կամ 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողը՝ աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության առումով.

1) տվյալ աշխատակազմում կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է աշխատանքները, ենթակա և հաշվետու է իր անմիջական ղեկավարին, ունի իրեն ենթակա աշխատողներ, պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու համար,
2) ենթակա աշխատողների նկատմամբ կիրառում է օրենքով նախատեսված խրախուսանքներ, չունի անմիջական ղեկավար,
3) ենթակա աշխատողների նկատմամբ կիրառում է օրենքով նախատեսված կարգապահական տույժեր, չունի անմիջական ղեկավար:

(1) («Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ փոխվարչապետ, ՏԿՆ 04.12.2008թ. թիվ 04-Ն հրամանի հավելվածի կետ 5, ենթակետ «ա»)

Հարց 28

Նշվածներից ո՞ր լիազորությունն ունի համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 1-ին կամ 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողը՝ որոշումներ կայացնելու լիազորությունների առումով.

1) մասնակցում է որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը,
2) իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը,
3) լուծում է հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ և տալիս հանձնարարականներ:

(3) («Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ փոխվարչապետ, ՏԿՆ 04.12.2008թ. թիվ 04-Ն հրամանի հավելվածի կետ 5, ենթակետ «բ»)

Հարց 29

Թեստավորման ավարտից հետո մրցութային և ատեստավորման հանձնաժողովները ե՞րբ են անցկացնում հարցազրույցը.

1) երկու օր հետո,
2) երեք օր հետո,
3) նույն օրը կամ հաջորդ օրը:

(3) («Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու մասին» ՀՀ ՏԿՀՆ 29.08.06թ. թիվ 12-ն հրամանի հավելված թիվ 1, կետ 10, ենթակետ «ժ» և հավելված թիվ 2, կետ 10 ենթակետ «ժբ»)

Հարց 30

Մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելը տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ ու՞մ կողմից կարող է արտամրցութային կարգով զբաղեցվել համայնքային ծառայության թափուր պաշտոնը.

1) համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձի կողմից,
2) համայնքային ծառայության կադրերի ռեզերվից տվյալ պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող անձի կողմից,
3) տվյալ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի կողմից:

(2) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14.1)

Հարց 31

Ու՞մ վրա են տարածվում համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

1) համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների վրա,
2) միայն աշխատակազմի համայնքային ծառայողների վրա,
3) միայն աշխատակազմի համայնքային ծառայողների և հայեցողական պաշտոններ զբաղեցնողների վրա,
4) աշխատակազմի աշխատողների վրա, բացառությամբ համայնքի ղեկավարի:

(1) («Համայնքների ղեկավարների աշխատակազմերի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգը հաստատելու մասին»
ՀՀ ՏԿՆ 19.01.09թ. թիվ 03-Ն հրամանի հավելվածի կետ 3)

Հարց 32

Աշխատակազմի համայնքային ծառայողը ի՞նչ ժամկետում է պարտավոր իր անմիջական ղեկավարին ներկայացնել հաշվետվություն տվյալ կիսամյակում իր կատարած աշխատանքների մասին.

1) յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ,
2) առնվազն երեք ամիսը մեկ անգամ,
3) յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո մեկշաբաթյա ժամկետում,
4) յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո տասնօրյա ժամկետում:

(3)(«Համայնքների ղեկավարների աշխատակազմերի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգը հաստատելու մասին»
ՀՀ ՏԿՀՆ 19.01.09թ. թիվ 03-Ն հրամանի հավելվածի կետ 31)

Հարց 33

Համայնքային ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը համայնքային ծառայողի ժամանակավոր անաշխատունակության կամ արձակուրդում գտնվելու ժամանակ ատեստավորման արդյունքների հիման վրա համապատասխան որոշումը ի՞նչ ժամկետում է ընդունում.

1) ատեստավորման ավարտից հետո երեք օրվա ընթացքում,
2) ատեստավորման ավարտից հետո անմիջապես,
3) նրա աշխատանքի ներկայանալու օրվանից՝ աշխատանքային երեք օրվա ընթացքում,
4) նրա աշխատանքի ներկայանալու օրվանից՝ յոթ օրվա ընթացքում:

(3) («Համայնքային ծառայության ատեստավորման կարգը սահմանելու մասին»
ՀՀ ՏԿՀՆ 11.09.06թ. թիվ 15-Ն հրամանի հավելվածի կետ 81)

Հարց 34

Ո՞վ է անցկացնում ծառայողական քննությունը.

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը,
2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը, իսկ վարչական շրջաններում՝ տվյալ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը,
3) ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինն իր աշխատակազմի միջոցով, իսկ ըստ անհրաժեշտության՝ նաև իր կողմից ստեղծված աշխատանքային խմբի միջոցով, որում կարող են ընդգրկվել նաև ներկայացուցիչներ համապատասխան տարածքային կառավարման մարմնից,
4) ավագանու կողմից ստեղծված աշխատանքային խումբը, որում կարող են ընդգրկվել ներկայացուցիչներ քաղաքապետարանի աշխատակազմից:

(3) («Համայնքային ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ ՏԿՀՆ 13.07.06թ. թիվ 1003-Ն որոշման հավելվածի կետ 12)

Հարց 35

Ու՞մ կողմից ընդունված իրավական ակտով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում համայնքային ծառայողը մինչև մեկ տարի ժամկետով կարող է շարունակել զբաղեցնել իր պաշտոնը.

1) համայնքի ղեկավարի,
2) կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի աշխատակազմի ղեկավարի,
3) տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի,
4) համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի ավագանու:

(3) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 34)

Հարց 36

Քաղաքացիական ծառայության 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան ունեցող անձին համայնքային ծառայության պաշտոնի առաջին անգամ նշանակելու հետ միաժամանակ ի՞նչ դասային աստիճան է շնորհվում.

1) համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան,
2) համայնքային ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան,
3) համայնքային ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան,

4) համայնքային ծառայության տվյալ պաշտոնին համապատասխան դասային աստիճան:

(1) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 37

Նշվածներից ո՞ր հիմքով է լուծվում համայնքային ծառայության պաշտոնը ժամանակավորապես զբաղեցնելու համար անձի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը.

1) օրենքով նախատեսված ատեստավորման արդյունքների,
2) համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացման դեպքում՝ անկախ պայմանագրի գործողության ժամկետից,
3) օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու,
4) համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացման դեպքում՝ եթե լրացել է պայմանագրի գործողության ժամկետը:

(2) (ՀՀ կառավարության 13.07.2006թ.-ի N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետ)

Հարց 38

Ծառայողական քննությունը ցանկացած փուլում դադարեցվում է, եթե.

1) կողմերն իրենց ներկայացրած դիմումից (հաղորդումից) հրաժարվելու վերաբերյալ գրավոր դիմում են ներկայացնում լիազորված մարմին,
2) համայնքային ծառայողը տվել է բանավոր համաձայնություն իր նկատմամբ օրենքով նախատեսված համապատասխան կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ,
3) համայնքային ծառայողը դարձել է ժամանակավորապես անաշխատունակ,
4) համայնքային ծառայողը չի ենթարկվել ծառայողական քննություն վարողի պահանջներին:

(1) («Համայնքային ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ ՏԿՀՆ 13.07.06թ. թիվ 1003-Ն որոշման հավելվածի կետ 49)

Հարց 39

Ի՞նչ ժամկետով փորձաշրջան է սահմանվում քաղաքացիական ծառայության դասային աստիճան ունեցող անձին համայնքային ծառայության պաշտոնում առաջին անգամ նշանակման դեպքում.

1) մինչև 6 ամիս փորձաշրջան,
2) մինչև 1 տարի փորձաշրջան,
3) փորձաշրջան չի սահմանվում,
4) մինչև 3 ամիս փորձաշրջան:

(3) («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված)

Հարց 40

Համայնքային ծառայողի ատեստավորման թեստավորման փուլի արդյունքների վերաբերյալ բողոքարկումը ու՞մ է ներկայացվում.

1) ատեստավորման հանձնաժողովին,
2) մրցութային հանձնաժողովին,
3) ատեստավորման նախապատրաստական աշխատանքներն իրականացնող աշխատակազմին,
4) ՀՀ կառավարության լիազորած մարմին:

(1) («Համայնքային ծառայության ատեստավորման կարգը սահմանելու մասին»
ՀՀ ՏԿՀՆ 11.09.06թ. թիվ 15-Ն հրամանի հավելվածի կետ 60)

Աշխատակազմի քարտուղար Աննա Դանիելյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Եղեգիս համայնքի ղեկավարի

29-ը հունվարի 2020թ. թիվ 16 Ա որոշման

Հարց 1

Ինչպե՞ս է ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում ՀՀ-ում.

1) ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով,
2) հանրահավաքների և խաղաղ ցույցերի միջոցով,
3) ՀՀ կառավարության միջոցով,
4) ՀՀ դատարանների միջոցով:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 2)

Հարց 2

Ո՞ր իրավական ակտերին պետք է համապատասխանեն օրենքները՝

1) Սահմանադրությանը և օրենքներին:
2) Սահմանադրական օրենքներին:
3) Օրենքներին:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 5)

Հարց 3

Ո՞ր իրավական ակտերին պետք է համապատասխանեն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝

1) Սահմանադրությանը և այլ իրավական ակտերին:
2) Սահմանադրությանը:
3) Սահմանադրական օրենքներին և օրենքներին:

(3) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 5)

Հարց 4

Հայաստանի Հանրապետության վավերացած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում ո՞ր նորմերն են կիրառվում՝

1) Միջազգային պայմանգրերի նորմերը:
2) Սահմանադրական նորմերը:
3) Սահմանադրական օրենքները կայլ իրավական ակտերը:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 5)

Հարց 5

Ե՞րբ են ուժի մեջ մտնում օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը.

1) հրապարակվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում,
2) օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո,
3) հրապարակման հաջորդ օրը,
4) ստորագրման պահից:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 6)

Հարց 6

ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան ինչպե՞ս է իրականացվում պետական իշխանությունը ՀՀ-ում.

1) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բաժանման և հավասարակշռման հիման վրա,
2) օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա,
3) կուսակցական, կառավարման և կրոնական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 4)

Հարց 7

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են.

1) ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության որոշումներով,
2) ՀՀ Նախագահի հրամանագրերով,
3) ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքներով:

(3) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 6)

Հարց 8

Ինչպե՞ս են անցկացվում ՀՀ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեները՝

1) Ընտրությունների միջոցով, գաղտնի քվեարկությամբ:
2) Ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:
3) Հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 7)

Հարց 9

Նշվածներից ո՞վ է պարտավոր օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը

1) Պարտադիր զինծառայողները:
2) Յուրաքանչյուր ոք:
3) Յուրաքանչյուր քաղաքացի:

(3) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 14)

Հարց 10

Նշվածներից ի՞նչն է երաշխավորվում Հայաստանի Հանրապետությունում՝

1) Կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:
2) Կրոնական կազմակերպությունների գործունեության վերահսկողությունը:
3) Կրոնական կազմակերպությունների գործունեության հսկողությունը:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 17)

Հարց 11

Նշվածներից ո՞ր իրավական ակտով կարող են կարգավորվել Հայաստանի Հանրապետության և Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները՝

1) օրենքով և այլ իրավական ակտերով:
2) օրենքով:
3) ՀՀ միջազգային պայմանագրերով:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 18)

Հարց 12

Նշվածներից ո՞ր իրավական ակտով են սահմանվում Հայաստանի Հանրապետության դրոշի և զինանշանի մանրամասն նկարագրությունը՝

1) Օրենքով:
2) ՀՀ միջազգային պայմանագրերով:
3) Այլ իրավական ակտերով:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 21)

Հարց 13

Նշվածներից ո՞ր դեպքում անձն օրենքով սահմանված կարգով կարող է զրկվել անձնական ազատությունից

1) Եթե անձը չի ենթարկվել դատարանի իրավաչափ կարգադրությանը:
2) Անձի գործողությունները չեն համապատասխանում դատարանի ուժի մեջ մտած կարգադրության պահանջներին:
3) Անձը ճանաչվել է անգործունակ:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 27)

Հարց 14

Անձնական ազատությունից զրկված անձը ե՞րբ է տեղեկացվում ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին

1) Նույն օրը:
2) Եռօրյա ժամկետում:
3) Անհապաղ:

(3) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 27)

Հարց 15

Ո՞վ ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք.

1) ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք,
2) միայն ՀՀ քաղաքացիները՝ անկախ բնակության վայրից,
3) յուրաքանչյուր ոք:

(3) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 33)

Հարց 16

Ի՞նչ նպատակով կարող է օրենքով սահմանափակվել ամուսնանալու ազատությունը՝

1) Առողջության և բարոյականության պաշտպանության նպատակով:
2) Առողջության , բարոյականության, պետության պաշտպանության նպատակով:
3) Առողջության պաշտպանության նպատակով:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 35)

Հարց 17

Ովքե՞ր ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք.

1) ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք,
2) յուրաքանչյուր քաղաքացի,
3) ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք,
4) ՀՀ-ում բնակվող օտարերկրյա քաղաքացիները:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 56)

Հարց 18

Ի՞նչ հարցերում են ՀՀ զինված ուժերը պահպանում չեզոքություն.

1) սոցիալական,
2) տնտեսական,
3) քաղաքական:

(3) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 14)

Հարց 19

Նշվածներից ո՞վ է /ովքե՞ր են/ պարտավոր հոգ տանել իր /իրենց/ անաշխատունակ և կարիքավոր ծնողների մասին՝

1) Պետությունը:
2) Սոցիալական հաստատությունները:
3) Չափահաս աշխատունակ անձինք:

(3) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 36)

Հարց 20

Նշվածներից ու՞մ /ո՞ր մարմնի/ հոգածության և պաշտպանության ներքո են առանց ծնողական խնամքի մնացած երեխաները՝

1) Պետության:
2) Սոցիալական հաստատությունների:
3) Չափահաս աշխատունակ անձանց:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 37)

Հարց 21

Նշվածներից ո՞վ ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք:
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող յուրաքանչյուր ոք:
3) Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով չգտնվող յուրաքանչյուր ոք:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 40)

Հարց 22

Հայաստանի Հանրապետության քաղաքացու ո՞ր իրավունքը սահմանափակման ենթակա չէ՝

1) Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագիր ստանալու իրավունքը:
2) Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը:
3) Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով չգտնվելը:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 40)

Հարց 23

Ո՞ր իրավական ակտով սահմանված դեպքերում և ո՞ր իրավական ակտով կարող է կասեցվել կուսակցության գործունեությունը՝

1) Օրենքով:
2) Օրենքով սահմանված դեպքերում՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ:
3) ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 46)

Հարց 24

Հայաստանի Հանրապետության քաղաքացին ինչի՞ց չի կարող զրկվել՝

1) Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու իրավունքից:
2) Քաղաքացիությունից:
3) Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունքից:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 47)

Հարց 25

Ո՞վ ունի ՀՀ-ում քաղաքական ապաստան հայցելու իրավունք.

1) օտարերկրյա քաղաքացիները,
2) քաղաքական հետապնդման ենթարկվող յուրաքանչյուր ոք,
3) արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիները:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 54)

Հարց 26

Նշվածներից ո՞վքեր չունեն ընտրելու և ընտրվելու,ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք՝

1) դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:
2) դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի:
3) դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձինք:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 48)

Հարց 27

Նշվածներից ո՞վքեր չունեն ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք՝

1) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի:
2) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձինք:
3) անաշխատունակ անձինք:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 48)

Հարց 28

Ի՞նչ նպատակով կարող է օրենքով սահմանափակվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը՝

1) Հանրային շահերի պաշտպանության նպատակով:
2) Հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների պաշտպանության նպատակով:
3) Հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

(3) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 51)

Հարց 29

Ի՞նչ իրավական ակտով են սահմանվում աշխատանքից ազատման հիմքերը.

1) օրենքով,
2) ՀՀ Նախագահի հրամանագրով,
3) ՀՀ կառավարության որոշմամբ,
4) Ազգային ժողովի որոշմամբ:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 57)

Հարց 30

Նշվածներից ո՞ր տարիքի երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն է արգելվում.

1) մինչև 18 տարեկան:
2) մինչև 16 տարեկան:
3) Սահմանափակում չկա:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 57)

Հարց 31

Հղիության և ծննդաբերության դեպքում ո՞վ ունի վճարովի արձակուրդի իրավունք.

1) յուրաքանչյուր կին,
2) 2 և ավել երեխա ունեցող յուրաքանչյուր կին,
3) յուրաքանչյուր աշխատող կին:

(3) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 57)

Հարց 32

Ովքե՞ր չեն կարող լինել կուսակցության անդամ.

1) համայնքների ղեկավարները,
2) դատավորները, դատախազները և քննիչները,
3) ՀՀ Ազգային ժողովի պատգամավորները:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 46)

Հարց 33

Ո՞ր միջոցների հաշվին է օրենքով նախատեսված դեպքերում ցույց տրվում իրավաբանական օգնություն՝

1) Պետական միջոցների հաշվին:

2) Օրենքով չարգելված այլ միջոցներով:

3) Մասնավոր հատվածի միջոցների հաշվին:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 64)

Հարց 34

Նշվածներից ո՞վ ունի ներման ներառյալ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք՝

1) Յուրաքանչյուր դատապարտյալ:

2) Յուրաքանչյուր մեղադրյալ:

3) Դատապարտյալները:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 70)

Հարց 35

Ի՞նչ իրավական ակտով են սահմանվում հավաքների ազատության իրականացման և պաշտպանության պայմաններն ու կարգը.

1) օրենքով,

2) Սահմանադրական դատարանի նախագահի որոշմամբ,

3) ՀՀ կառավարության որոշմամբ,

4) ՀՀ Նախագահի հրամանագրով:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 44)

Հարց 36

Օրենքով սահմանված դեպքերում ի՞նչ իրավական ակտով կարող է կասեցվել կուսակցության գործունեությունը.

1) ՀՀ Նախագահի հրամանագրով,

2) Սահմանադրական դատարանի որոշմամբ,

3) ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի որոշմամբ:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 46)

Հարց 37

Ո՞ր մարմնի որոշմամբ կարող է խուզարկվել բնակարանը.

1) միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով,

2) նախաքննության մարմնի որոշմամբ,

3) ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 32)

Հարց 38

Ո՞վ կարող է ընտրվել Ազգային ժողովի պատգամավոր.

1) քսանհինգ տարին լրացած և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք,
2) քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում միայն ՀՀ-ում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք,
3) ՀՀ քաղաքացիություն ունեցող և ՀՀ-ում մշտապես բնակվող յուրաքանչյուր ոք,
4) երեսունհինգ տարին լրացած յուրաքանչյուր ՀՀ քաղաքացի:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 48)

Հարց 39

Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը ովքե՞ր իրավունք ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու.

1) յուրաքանչյուր ՀՀ քաղաքացի,
2) ՀՀ-ում բնակվող յուրաքանչյուր ոք,
3) տասնութ տարին լրացած յուրաքանչյուր ոք,
4) տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացիները:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 48)

Հարց 40

Նշվածներից ո՞ր իրավական ակտով են սահմանվում ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման հիմքերը.

1) օրենքով,
2) Հանրապետության նախագահի հրամանագրով,
3) ՀՀ կառավարության որոշմամբ,
4) Ազգային ժողովի որոշմամբ:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 47)

Հարց 41

Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը.

1) գործում են ստորագրման պահից,
2) չունեն հետադարձ ուժ,
3) գործում են հրապարակման պահից,
4) ունեն հետադարձ ուժ:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 73)

Հարց 42

Ի՞նչ իրավական ակտով է սահմանվում նվազագույն աշխատավարձի չափը.

1) օրենքով,
2) ՀՀ կառավարության որոշմամբ,
3) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով,
4) ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 84)

Հարց 43

Ո՞վ իրավունք ունի մուտք գործելու Հայաստանի Հանրապետություն.

1) յուրաքանչյուր քաղաքացի և ՀՀ-ում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք,
2) յուրաքանչյուր օտարերկրյա քաղաքացի,
3) յուրաքանչյուր ոք:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 40)

Հարց 44

Պատգամավորների ձայների ի՞նչ հարաբեակցությամբ են ընդունվում սահմանադրական օրենքները՝

1) Պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք երրորդով:
2) Պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:
3) Պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 103)

Հարց 45

Քանի՞ անդամից է կազմված Կենտրոնական ընտրական հանձնաժողովը.

1) առնվազն վեց անդամից,

2) ոչ պակաս, քան յոթ անդամից,
3) յոթ անդամից,
4) ութ անդամից:

(3) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 195)

Հարց 46

Ո՞վ կարող է ընտրվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ.

1) ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք,
2) յուրաքանչյուր ՀՀ քաղաքացի,
3) բարձրագույն կրթություն ունեցող և 18 տարին լրացած յուրաքանչյուր ոք,
4) բարձրագույն կրթություն ունեցող և պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր ոք:

(4) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 195)

Հարց 47

Ո՞վ է դադարեցնում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները.

1) ՀՀ կառավարությունը,
2) Հանրապետության նախագահը,
3) Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:
4) Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

(3) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 195)

Հարց 48

Նշվածներից ո՞րն է տեղական ինքնակառավարման սահմանումը՝ ըստ ՀՀ Սահմանադրության 179-րդ հոդվածի՝

1) Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու տեղական նշանակության հանրային հարցերը:

2) Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է:

3) Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը:

(1) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 179)

Հարց 49

Ի՞նչ իրավական կարգավիճակ ունի համայնքը՝

1) Բնակրության հանրույթ է,որը ուն լուծելու տեղական նշանակության հարցեր:
2) Հանրային իրավունքի իրավաբանական անձ է:
3) Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է:

(2) (ՀՀ Սահմանադրություն, հոդված 180)

Աշխատակազմի քարտուղար Աննա Դանիելյան

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Եղեգիս համայնքի ղեկավարի

29-ը հունվարի 2020թ. թիվ 16 Ա որոշման

Հարց 1

Ի՞նչ նորմատիվ իրավական ակտով է սահմանվում համայնքների վարչական սահմանների նկարագրությունը.

1) օրենքով,
2) ՀՀ կառավարության որոշմամբ,
3) համայնքի ավագանու որոշմամբ
4) ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 5)

Հարց 2

Ե՞րբ է գումարվում նորընտիր ավագանու առաջին նիստը.

1) ավագանու ընտրությունների արդյունքների հրապարակման հաջորդ օրը,
2) համայնքի ավագանու ձևավորումից հետո մեկ ամսվա ընթացքում՝ համայնքի ղեկավարի որոշմամբ,
3) ոչ ուշ, քան ավագանու լիազորությունները ստանձնելու պահից քսան օրվա ընթացքում:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 3

Համայնքի ավագանին իր որոշումները և ուղերձները ընդունում է.

1) ձայների մեկ երրորդով,
2) ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ,
3) ավագանու օրենքով սահմանված անդամների ձայների մեծամասնությամբ:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16, 64)

Հարց 4

Ի՞նչ իրավական ակտով են սահմանվում համայնքի կամավոր խնդիրները.

1) համայնքի ղեկավարի որոշմամբ,
2) սահմանվում են ավագանու որոշմամբ,
3) համապատասխան մարզպետի որոշմամբ:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 5

Ի՞նչ կարգով կարող է համայնքի ավագանին բողոքարկել համայնքի ղեկավարի որոշումները.

1) ծառայողական քննության միջոցով,
2) դատական կարգով
3) ավագանու հաստատած կարգով:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 6

Համայնքի ավագանու անդամը չի կարող միաժամանակ՝

1) լինել առևտրային կազմակերպության ղեկավար,
2) զբաղեցնել քաղաքացիական ծառայության կամ պետական այլ պաշտոն,
3) աշխատել իրավապահ, ազգային անվտանգության և դատական մարմիններում:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 19)

Հարց 7

Նշվածներից ո՞ր դեպքում են վաղաժամկետ դադարեցվում համայնքի ավագանու անդամի լիազորությունները.

1) եթե նա չի կատարել օրենքով իր վրա դրված պարտականությունները,
2) եթե նա զորակոչվել կամ ծառայության է անցել գինված ուժերում և այլ զորքերում,
3) եթե նա անհարգելի պատճառներով բացակայել է միջհամայնքային միավորման խորհրդի նիստերի քվեարկությունների ավելի քան կեսից,
4) եթե նա ժամանակավոր անաշխատունակ է:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22)

Հարց 8

Ի՞նչ չափով ամսական դրամական փոխհատուցում կարող է ստանալ համայնքի ավագանու անդամը.

1) համայնքի ղեկավարի աշխատավարձի 40 տոկոսի չափով,
2) համայնքապետարանի աշխատակազմի ամենացածր վարձատրություն ստացող աշխատակցի աշխատավարձի չափով,
3) ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի ամենամսյա պատգամավորական ծախսերի մինչև 30 տոկոսի չափով:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 24)

Հարց 9

Նշվածներից ո՞ր դեպքում է ՀՀ կառավարությունը պետական լիազորված մարմնի ներկայացմամբ վաղաժամկետ դադարեցնում համայնքի ղեկավարի լիազորությունները.

1) եթե նա դադարել է համայնքի բնակիչ լինելուց,
2) եթե նա ընտրվել է միջհամայնքային միավորման նախագահ,
3) եթե նա չի իրականացրել պետության կողմից պատվիրակած լիազորությունները՝ դրանց փաստացի ֆինանսավորման պայմաններում:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 26)

Հարց 10

Նշված լիազորություններից ո՞րն է իրականացնում համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը.

1) վերահսկում է համայնքային ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների գործունեությունը,
2) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրատարակումը,
3) կազմակերպում է օրենքով համայնքի ղեկավարին վերապահված՝ պետության կողմից պատվիրակած լիազորությունների իրականացումը:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 33)

Հարց 11

Նշվածներից ո՞ր մարմիններն են անմիջականորեն իրականացնում հողերի պահպանման և օգտագործման նկատմամբ վերահսկողությունը.

1) ՀՀ կառավարությունը և ՀՀ Ազգային ժողովը,
2) համապատասխան լիազոր պետական մարմինը, ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները,
3) համայնքապետարանի աշխատակազմը և համայնքի ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունները,
4) միայն ՀՀ մարզպետարանները:

(2) (ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 40)

Հարց 12

Նշվածներից ո՞րն է համարվում համայնքի ղեկավարի իրավասությունը.

1) օրենքով սահմանված կարգով որոշում է ավագանու անդամների ամենամսյա ծախսերի փոխհատուցման չափը,
2) հաստատում է համայնքի զարգացման ծրագիրը,
3) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշման նախագիծը,
4) հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 35)

Հարց 13

Նշված լիազորություններից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում սեփական՝ քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում.

1) համայնքի բնակիչների անունից դիմումներ է ներկայացնում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին,
2) կազմակերպում է համայնքի արխիվային գործի վարումը,
3) վավերացնում է համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը, եթե այդ համայնքում չկա մշտապես գործող նոտար,
4) կազմում և համապատասխան հանձնաժողովներին է տրամադրում ընտրացուցակները:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 36)

Հարց 14

Նշված լիազորություններից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում սեփական՝ ֆինանսների բնագավառում.

1) օրենքով սահմանված կարգով գանձում է գույքահարկն ու հողի հարկը,
2) կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը,
3) սահմանում է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 38)

Հարց 15

Նշվածներից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում սեփական լիազորություն հասարակական կարգի պահպանության բնագավառում.

1) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատախանատվության,
2) առաջարկություն է ներկայացնում համապատասխան մարմնին ոստիկանության պետին նշանակելու և ազատելու վերաբերյալ,
3) որոշում է երթևեկության նշանների տեղադրման վայրերը:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 35)

Հարց 16

Նշված լիազորություններից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում սեփական՝ քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում.

1) կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ և սանիտարական մաքրումը,
2) կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը,
3) տրամադրում է քաղաքաշինական լիցենզիաներ:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 42)

Հարց 17

Նշված լիազորություններից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում պետության պատվիրակած՝ տրանսպորտի բնագավառում.

1) կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարությունը,
2) տալիս է համայնքի տարածքում մարդատար և երթուղային տաքսիների ծառայություն իրականացնելու թույլտվություն,
3) իրավասու մարմինների ներկայացմամբ հաստատում և թույլատրում է համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայումն ու հանումը:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 44)

Հարց 18

Նշված լիազորություններից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում պետության պատվիրակած՝ սոցիալական պաշտպանության բնագավառում.

1) համայնքի տարածքում կազմակերպում է սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրումը,

2) տալիս է համայնքի տարածքում մարդատար և երթուղային տաքսիների ծառայություն իրականացնելու թույլտվություն,
3) նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 48)

Հարց 19

Նշված լիազորություններից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում սեփական՝ գյուղատնտեսության բնագավառում.

1) աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին,
2) կազմակերպում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները,
3) կատարում է համայնքային սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 49)

Հարց 20

Նշվածներից ո՞ր իրավասությունն ունի համայնքի ավագանին արխիվային գործի բնագավառում.

1) համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում համայնքային արխիվ ստեղծելու մասին որոշման նախագիծը,
2) որոշում է համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքի փոխանցումը պետական սեփականության,
3) վարում է արխիվային գործը:

(2) («Արխիվային գործի մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 21

Նշված եկամտատեսակներից որո՞նք են համարվում համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ.

1) սուբվենցիաները,
2) վարկերի և փոխատվությունների ձևով ներգրավված միջոցները,
3) բյուջետային երաշխիքները:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 86)

Հարց 22

Նշված լիազորություններից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում պետության պատվիրակած՝ կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում.

1) աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը,
2) աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը,
3) կազմակերպում է ՀՀ տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ,

4) աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 46)

Հարց 23

Ո՞ր չափը չի կարող գերազանցել համայնքի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդը.

1) բյուջեի ֆոնդային մասի եկամուտների 10 տոկոսը,
2) բյուջեի ֆոնդային մասի եկամուտների 20 տոկոսը,
3) բյուջեի ֆոնդային մասի եկամուտների 30 տոկոսը:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 90)

Հարց 24

Ի՞նչ ժամկետում է համայնքի հաստատված բյուջեն ներկայացվում համայնքի բյուջեն սպասարկող պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին.

1) բյուջեն հաստատելու հաջորդ աշխատանքային օրը,
2) մեկշաբաթյա ժամկետում,
3) մեկամսյա ժամկետում,
4) 15-օրյա ժամկետում:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 92)

Հարց 25

Ի՞նչ պարբերականությամբ է պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը համայնքի ղեկավարին ներկայացնում տեղեկություններ բյուջեի եկամուտների և ծախսերի մասին.

1) ամենօրյա,
2) ամենշաբաթյա,
3) ամենամսյա,
4) 15-օրյա:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 92)

Հարց 26

Ե՞րբ է համայնքի ղեկավարը տարեկան հաշվետվության հետ հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն ներկայացնում համայնքի ավագանուն.

1) բյուջետային տարվա ավարտից 15 օր հետո,
2) հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ին,
3) մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 82)

Հարց 27

Ի՞նչ կարգով կարող է համայնքի ղեկավարը բողոքարկել համայնքի ավագանու որոշումները.

1) վերադաս պետական կառավարման մարմնի որոշմամբ հաստատված կարգով,
2) դատական կարգով,
3) ՀՀ մարզպետների որոշմամբ հաստատված կարգով:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 28

Ի՞նչ է միջհամայնքային միավորումը.

1) տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կամ հանրային շահերից ելնելով ստեղծված համայնքների միավորում է,
2) միայն պետության շահերից ելնելով ստեղծված համայնքների միավորում է,
3) ՀՀ Ազգային ժողովի կողմից ստեղծված համայնքների միավորում է:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 100)

Հարց 29

Ի՞նչ միջոցների հաշվին է իրականացվում համայնքային արխիվների ֆինանսական ու նյութատեխնիկական ապահովումը.

1) ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին,
2) համայնքի տարածքում գործող հասարակական կազմակերպությունների միջոցների հաշվին,
3) համայնքային բյուջեների միջոցների հաշվին,
4) բարեգործական կազմակերպությունների միջոցների հաշվին:

(3) («Արխիվային գործի մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 30

Ի՞նչ է տեղական տուրքը.

1) օրենքով սահմանված գումար է, որն անհրաժեշտ է ՏԻՄ-երի կողմից իրենց վերապահված լիազորություններն իրականացնելու համար,
2) ՏԻՄ-երի՝ սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված օրենքով սահմանված գործողությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է,
3) պետական տուրքի այն տեսակն է, որն ուղղվում է համայնքի բյուջե՝ ՏԻՄ-երի լիազորությունների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:

(2) («Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 3)

Հարց 31

Ի՞նչ է տեղական վճարը.

1) օրենքով սահմանված գումար է, որն անհրաժեշտ է ՏԻՄ-երի կողմից իրենց վերապահված լիազորություններն իրականացնելու համար,
2) համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության հիմնարկների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող և համայնքի բյուջե վճարվող պարտադիր գանձույթ է,
3) ՏԻՄ-երի՝ սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե կամ բյուջեի բաղկացուցիչ մաս կազմող, օրենքի համաձայն բացված արտաբյուջետային միջոցների հաշվին վճարվող, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է:

(3) («Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 3)

Հարց 32

Նշվածներից որի՞ համար կարող է սահմանվել տեղական վճար.

1) համայնքի տարածքում սննդամթերքի մատակարարումների թույլտվություն տալու համար,
2) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար,
3) համայնքի տարածքում ուղևորափոխադրումներ իրականացնելու համար:

(2) («Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 33

Նշվածներից որի՞ համար կարող է սահմանվել տեղական վճար.

1) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար,
2) ՏԻՄ-երի կողմից կազմակերպվող աղբահանության և մատուցվող այլ կոմունալ ծառայությունների համար՝ բնակիչներից վարձավճար,
3) համայնքային ենթակայության հիմնարկների կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճար:

(1) («Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 34

Ե՞րբ է սահմանվում տեղական տուրքի դրույքաչափը.

1) յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում,
2) համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ,
3) ցանկացած պահի,
4) համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց հետո՝ ըստ անհրաժեշտության:

(2) («Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 11)

Հարց 35

Ե՞րբ կարող են փոփոխվել օրացուցային տարվա համար ավագանու սահմանած տեղական վճարների դրույքաչափերը.

1) յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում,
2) տեղական վճարների դրույքաչափերը փոփոխության չեն կարող ենթարկվել,

3) ցանկացած պահի,

4) համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց հետո՝ ըստ անհրաժեշտության:

(2) («Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 36

Ու՞մ որոշմամբ կարող են կիրառվել տեղական տուրքի և (կամ) վճարի արտոնություններ.

1) համայնքի ղեկավարի որոշմամբ,

2) համայնքի ավագանու որոշմամբ,

3) տեղական տուրք կամ վճար գանձող մարմնի որոշմամբ:

(2) («Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 37

Ի՞նչ է բյուջետային վարկը.

1) առևտրային բանկերի կողմից պետական և համայնքային բյուջեներին և բյուջետային հիմնարկներին տրամադրվող ֆինանսական միջոցներն են,

2) համայնքային բյուջեներից այլ կազմակերպություններին տրամադրվող ժամկետային, վերադարձման ենթակա և տոկոսավճարներով վճարվող դրամական միջոցներն են,

3) վերադարձելիության, ժամկետայնության, արժեքավորման ու վճարովիության սկզբունքով պետական բյուջեից համայնքներին, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև օտարերկյա պետություններին և միջազգային կազմակերպություններին դրամական տեսքով տրվող միջոցներն են:

(3) («ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 38

Ի՞նչ է բյուջետային փոխատվությունը.

1) պետական և համայնքային բյուջեներից այլ պետություններին և համայնքներին որոշակի ժամկետներում տրամադրվող միջոցներն են,

2) վերադարձելիության, արժեքավորման և ժամկետայնության սկզբունքով առանց վճարովիության սկզբունքի պետական բյուջեից և համայնքների բյուջեներից համայնքներին առանձին ծրագրերի կամ ծախսերի ֆինանսավորման նպատակով դրամական տեսքով տրվող միջոցներն են:

3) այլ կազմակերպությունների կամ պետությունների կողմից պետական և համայնքային բյուջեներին տրամադրվող դրամական միջոցներն են:

(2) («ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 39

Ե՞րբ է բյուջետային փոխատվությունն ենթակա վերադարձման.

1) փոխատվության տրման նույն բյուջետային տարում,

2) տրամադրման օրվանից մեկ տարվա ընթացքում,

3) համայնքի և պետական լիազորված մարմնի միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում,

4) տրամադրման օրվանից երկու տարվա ընթացքում:

(1) («ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 40

Նշվածներից ո՞ր իրավասությունն ունի համայնքի ղեկավարը՝ թափոնների գործածության ոլորտում.

1) իրականացնում է համայնքի վարչական սահմաններում չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացումը (լիկվիդացումը),
2) աղբահանության կազմակերպման մասին որոշման նախագիծ է ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը,
3) ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում և կարգով կազմակերպում է աղբահանությունը:

(1) («Թափոնների մասին» ՀՀ օրենք, հոդված 11)

Հարց 41

Ո՞ր դեպքում համայնքը կարող է նոր փոխատվություն ստանալ.

1) երբ բարեխղճորեն և պատշաճ կերպով մարվում են ընթացիկ վարկերը և դրանց տոկոսավճարները,
2) նախկինում ստացված փոխատվության գծով պարտքը ամբողջությամբ մարելուց հետո,
3) ցանկացած պահի, եթե կա համայնքի ավագանու համապատասխան որոշումը:

(2) («ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 30)

Հարց 42

Համայնքի բյուջեի ո՞ր մասն են պարտադիր ուղղվում վարկային (ներառյալ արժեթղթերի թողարկումից ստացված) միջոցները.

1) վարչական մաս,
2) ֆոնդային մաս,
3) համայնքի արտաբյուջետային հաշիվ:

(2) («ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 30)

Հարց 43

Համայնքի ղեկավա ը նշվածներից ու՞մ է ներկայացնում բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ավագանու կողմից հաստատվելուց հետո.

1) համապատասխան մարզպետին,
2) ՀՀ ֆինանսների նախարարին,
3) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին,
4) ՀՀ կառավարություն:

(1) («ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 35)

Հարց 44

Ի՞նչ է տեղական հանրաքվեն.

1) իշխանության իրականացման միջոց,
2) համայնքի բնակիչների կողմից կամքի արտահայտման հնարավորություն,
3) տեղական հանրաքվեն տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության հանրային հարցերով քվեարկությունն է:

(3) («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, հոդված 1)

Հարց 45

Նշվածներից ո՞ր մարմիններն են հատուցում քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ) պատճառված վնասը.

1) համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը,
2) Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը,
3) համապատասխան պաշտոնատար անձը:

(2) (ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1063)

Հարց 46

Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում հողերի կադաստրային գները.

1) համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
2) մարզպետը,
3) ՀՀ կառավարությունը,
4) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն:

(3) (ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 66)

Հարց 47

Նշվածներից ո՞ր մարմինն է ապահովում համայնքի տարածքում պետական մշակութային քաղաքականության իրականացումը.

1) ՀՀ մշակույթի նախարարությունը,
2) համայնքի ղեկավարը,
3) համայնքի ավագանին,
4) համայնքի ղեկավարի տեղակալը:

(2) («Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 24)

Հարց 48

Նշվածներից ո՞րն է հանդիսանում համատիրության գործունեության նպատակ.

1) տեղական ինքնակառավարման մարմիններին իր իրավասության սահմաններում աջակցության տրամադրումը,
2) համայնքային նշանակության խնդիրների լուծումը,

3) օրենքով սահմանված կարգով իրականացնել բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարումը:

(3) («Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 5)

Հարց 49

Ովքե՞ր կարող են անդամակցել համատիրությանը.

1) տվյալ համատիրության մեջ ընդգրկված բազմաբնակարան շենքի (շենքերի), շինության ցանկացած սեփականատեր,
2) տվյալ համատիրության մեջ ընդգրկված բազմաբնակարան շենքի ցանկացած բնակիչ,
3) տվյալ տարածքի ցանկացած շենքի և շինության սեփականատեր,
4) միայն տվյալ համայնքի բնակիչները:

(1) («Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 25)

Հարց 50

Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում համատիրության տարեկան հաշվեկշիռը.

1) համատիրության նախագահը,
2) համատիրության վարչությունը,
3) համատիրության ընդհանուր ժողովը:

(3) («Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 27)

Հարց 51

Ինչպե՞ս է իրականացվում սահմանամերձ տարածաշրջանների նկատմամբ պետական քաղաքականությունը.

1) ՀՀ Նախագահի կողմից հաստատված ծրագրով,
2) սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագրով,
3) ազգային անվտանգության հայեցակարգով:

(2) («Սահմանամերձ տարածաշրջանների մասին» ՀՀ օրենք, հոդված 3)

Հարց 52

Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում սահմանամերձ համայնքների ցանկը.

1) Ազգային ժողովը,
2) ՀՀ կառավարությունը,
3) համապատասխան մարզպետը:

(2) («ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 17.11.1998թ. թիվ 713 որոշում)

Հարց 53

Նշվածներից որո՞նք են հանդիսանում իրավական ակտեր.

1) համայնքի ղեկավարի հրամանները,
2) համայնքի ավագանու կողմից ընդունված ուղերձները,
3) համայնքի ավագանու կամ համայնքի ղեկավարի որոշումները, ինչպես նաև տեղական հանրաքվեով ընդունված տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները,

4) համայնքի ղեկավարի ցուցումները:

(3) («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 4)

Հարց 54

Ի՞նչ իրավասություններ ունի մարզպետը համայնքի բյուջեի նախագծի նախապատրաստման ընթացքում.

1) մշակում է բյուջեի նախագծի նախնական տարբերակը և հանձնում համայնքի ղեկավարին այն ավագանու քննարկմանը ներկայացնելու համար,
2) աջակցում և մեթոդական օգնություն է ցույց տալիս տեղական ինքնակառավարման մարմիններին,
3) վավերացնում է ավագանու կողմից հաստատված բյուջեն,
4) պետական փորձագիտական եզրակացություն է տալիս բյուջեի նախագծի վերաբերյալ:

(2) («ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 06.05.1997թ. ՆՀ-728 հրամանագրի կետ 1.12)

Հարց 55

Ե՞րբ է համայնքի ավագանին համարվում կազմավորված.

1) եթե ընտրվել են ավագանու բոլոր անդամները,
2) եթե ընտրվել են ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն երկու երրորդը,
3) եթե ընտրվել են ավագանու անդամների օրենքով սահմանված թվի կեսից ավելին,
4) եթե ընտրվել են ավագանու անդամների օրենքով սահմանված թվի 1/3-ը:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 56

Ու՞մ սեփականությունն է ճանաչվում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ.

1) ինքնակամ շինություն կառուցողի,
2) համայնքի,
3) Հայաստանի Հանրապետության:

(2) (ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 188)

Հարց 57

Ու՞ր է ուղարկվում անժառանգ գույքի ժառանգության իրավունքի վկայագիրը.

1) տեղական ինքնակառավարման համապատասխան մարմին,
2) համապատասխան մարզպետին,
3) ՀՀ արդարադատության նախարարին:

(1) (ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1245)

Հարց 58

Նշվածներից ո՞ր մարմինն է իրականացնում նախնական հսկողություն համայնքների բյուջեների կատարման նկատմամբ.

1) համայնքի ղեկավարը,
2) համայնքի ավագանին,
3) համապատասխան մարզպետը,

4) գանձապետարանը:

(4) («Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 17)

Հարց 59

Նշվածներից ո՞ր մարմինը կարող է սահմանել գույքահարկի գծով արտոնություններ.

1) համայնքի ղեկավարը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով,
2) համայնքի ավագանին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով,
3) համապատասխան մարզպետը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

(2) («Գույքահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 15)

Հարց 60

Ովքե՞ր են հանդիսանում խնամակալության և հոգաբարձության մարմիններ.

1) տեղական ինքնակառավարման մարմինները,
2) սոցիալական ծառայության մարմինները,
3) համապատասխան մարզպետները,
4) համայնքի ղեկավարը և մարզպետը:

(1) (ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հոդված 109)

Հարց 61

Ո՞ր հողերն են համարվում ընդհանուր օգտագործման.

1) բնակավայրերի այն հողատարածքները, որոնք զբաղեցված են փողոցներով, հրապարակներով, զբոսայգիներով և հանրության կողմից օգտագործվող այլ տարածքներով,
2) համայնքի ավագանու կողմից սահմանված հողատարածքները,
3) այն հողատարածքները, որոնք ենթակա չեն մասնավորեցման:

(1) (ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 10)

Հարց 62

Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում հակահրդեհային նպատակով ջրօգտագործման կարգը.

1) համայնքի ղեկավարը,
2) մարզպետը,
3) ՀՀ կառավարությունը,
4) համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

(3) (ՀՀ ջրային օրենսգիրք, հոդված 24)

Հարց 63

Նշվածներից ո՞ր մարմինն է իրականացնում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունը.

1) համայնքի ղեկավարը,
2) համայնքի ավագանին,
3) պետական կառավարման լիազորված մարմինը:

(3) («Գովազդի մասին» ՀՀ օրենք, հոդված 24)

Հարց 64

Ինչպիսի՞ հսկողություն են իրականացնում ՀՀ կառավարության լիազոր մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ.

1) իրավական և մասնագիտական հսկողություն,
2) բացառապես այդ լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելու նպատակով,
3) այդ լիազորությունների իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցների ծախսման ուղղությունները ստուգելու նպատակով:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 95)

Հարց 65

Ինչպիսի՞ կարգավիճակ ունեն միջհամայնքային միավորումները.

1) համայնքային ենթակայության հիմնարկի կարգավիճակ,
2) միջհամայնքային միավորումում ընդգրկված համայնքների ենթակայության հիմնարկի կարգավիճակ,
3) հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ,
4) ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 100)

Հարց 66

Ո՞ր իրավական ակտով են սահմանվում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության կարգը

1) ՀՀ ընտրական օրենսգրքով
2) ՀՀ Սահմանադրությամբ
3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 67

Նշվածներից ո՞րն է տեղական ինքնակառավարման սկզբունք.

1) ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ, ընդհանուր, հավասար, ազատ ընտրական իրավունքի հիման վրա ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով.
2) «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի գերակայությունը,
3) համայնքի ավագանու անդամների հաշվետու լինելը:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 68

Որտե՞ղ է գործում վարչական ղեկավարը.

1) համայնքի ղեկավարի որոշած նստավայրում
2) համայնքի ավագանու որոշած նստավայրում
3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված վայրում

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 31)

Հարց 69

Ի՞նչ իրավունք ունի համայնքի ավագանու անդամը.

1) առաջարկություններ ներկայացնել ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,
2) հրապարակել համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները և ուղերձները,
3) սահմանել շենքերի ու շինությունների համարակալումը:

(1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 20)

Հարց 70

Ովքե՞ր են ձևավորում համայնքի ավագանու նիստի օրակարգի նախագիծը.

1) համայնքի ավագանին,
2) համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը,
3) համայնքի ղեկավարի, ավագանու անդամների, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարների (այսուհետ՝ վարչական ղեկավար) կողմից աշխատակազմի քարտուղարին նիստից առնվազն տասն օր առաջ ներկայացված գրավոր հարցերից,
4) համայնքի ղեկավարը, ավագանու անդամները և մարզպետը:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 71

Ինչպե՞ս և ի՞նչ ձևով է ընդունվում վարչական ակտը.

1) վարչական ակտը, որպես կանոն, ընդունվում է բանավոր՝ որոշման, հրամանի կամ օրենքով նախատեսված այլ ձևով,
2) վարչական ակտը, որպես կանոն, ընդունվում է գրավոր՝ որոշման, հրամանի, կարգադրության կամ օրենքով նախատեսված այլ ձևով,
3) վարչական ակտն ընդունվում է գրավոր՝ հրահանգի կամ հանձնարարականի ձևով:

(2) («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 54)

Հարց 72

Նշվածներից ո՞ր մարմինը կարող է դատական կարգով վիճարկել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին հակասող՝ համայնքի ղեկավարի որոշումները

1) համայնքապետարանի աշխատակազմը,
2) համայնքի ավագանին,
3) մարզային խորհուրդը:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 18)

Հարց 73

Քանի՞ վարչական ղեկավար ունի բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված յուրաքանչյուր բնակավայր՝ բացառությամբ համայնքի կենտրոնի.

1) երկու
2) երեք
3) մեկ

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 31)

Հարց 74

Ե՞րբ է համայնքի ղեկավարն ստանձնում իր պաշտոնը.

1) ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման օրը,
2) ոչ շուտ, քան համայնքի նախորդ ղեկավարի լիազորությունների ավարտման հաջորդ օրը,
3) մարզային ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում,
4) ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 75

Համայնքի ղեկավարը, ավագանու որոշման դեմ առարկելու դեպքում, ի՞նչ ժամկետում է հրավիրում ավագանու արտահերթ նիստ.

1) հնգօրյա ժամկետում,
2) եռօրյա ժամկետում,
3) մեկշաբաթյա ժամկետում,
4) տասնօրյա ժամկետում:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 76

Ու՞մ միջոցով է համայնքի ղեկավարն իրականացնում իր լիազորությունները.

1) բացառապես համայնքապետարանի աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների) և համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով,
2) բացառապես համայնքապետարանի աշխատակազմի միջոցով,
3) համայնքի բնակիչների միջոցով,
4) հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

(4) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 35)

Հարց 77

Ու՞ր են ուղղվում համայնքի սեփականությունը համարվող գույքի օտարումից ստացվող ֆինանսական միջոցները.

1) ՀՀ պետական բյուջե,
2) համայնքի արտաբյուջետային հաշվին,
3) համայնքային բյուջե:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 86)

Հարց 78

Ինչո՞վ է սահմանվում համայնքի ավագանու հանձնաժողովների քանակը, գործառույթները և ձևավորման կարգը.

1) համայնքի ղեկավարի որոշմամբ,
2) համայնքի ավագանու կանոնակարգով,
3) ՀՀ կառավարության որոշմամբ,
4) համապատասխան մարզպետի որոշմամբ:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 79

Նշվածներից ո՞ր մարմինն է իրականացնում ՀՀ տարածքի քաղաքաշինական կադաստրի վարումը և կադաստրային ամփոփումը.

1) քաղաքաշինական բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը,
2) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահը,
3) համապատասխան մարզպետը:

(1) («Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 20)

Հարց 80

Ո՞վ է համարվում համայնքի բնակիչ.

1) այն անձը, որը բնակվում է տվյալ համայնքում,

2) այն անձը, որը ծնվել է տվյալ համայնքում,
3) այն անձը, որը հաշվառված է տվյալ համայնքի բնակչության ռեգիստրում:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 4)

Հարց 81

Որո՞նք են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները.

1) սեփական համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից օրենքով պատվիրակված պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով,
2) օրենսդրական և կազմակերպական,
3) պարտադիր և հայեցողական:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 82

Ինչպե՞ս են լուծվում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները.

1) համապատասխան մարզպետի որոշմամբ սահմանված կարգով,
2) համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով,
3) ՀՀ կառավարության սահմանած կարգով:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 83

Ինչպե՞ս են իրականացվում պետության պատվիրակած լիազորությունները.

1) ՀՀ մարզպետների հանձնարարականներով և կարգադրություններով սահմանված կարգով,
2) ՀՀ կառավարության սահմանած կարգով,
3) ՀՀ Ազգային ժողովի որոշումներով և ՀՀ Նախագահի հրամանագրերով սահմանված կարգով,
4) համայնքի ավագանու կողմից սահմանված կարգով:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 84

Ո՞ր դեպքում կարող են իրականացվել համայնքի կամավոր խնդիրները.

1) միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում,
2) միայն պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիաներով և ՀՀ կառավարության սահմանած կարգով և դեպքում,
3) համայնքի արտաբյուջետային միջոցներով և լիազոր մարմնի սահմանած կարգով և դեպքում:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 85

Համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի առնչությամբ համայնքի ավագանին կարող է ընդունել.

1) հրամաններ,
2) ուղերձներ,
3) արձանագրություններ,
4) կարգադրություններ:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 86

Գյումրի և Վանաձոր համայնքներում մինչև համայնքի ղեկավարի ընտրվելը ո՞վ է վարում համայնքի ավագանու նիստը.

1) համապատասխան մարզպետը,
2) ավագանու որոշմամբ ընտրված անդամը,
3) ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը,

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 64)

Հարց 87

Ինչպե՞ս կարող է համայնքի ավագանին բողոքարկել համայնքի ղեկավարի որոշումները.

1) համապատասխան մարզպետին դիմելու միջոցով,
2) դատական կարգով,
3) ՀՀ կառավարություն դիմելու միջոցով:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 88

Նշվածներից ո՞վ է գումարում համայնքի ավագանու արտահերթ նիստ.

1) համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը՝ իր կամ ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ,
2) համապատասխան մարզպետը՝ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ,
3) համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը՝ համայնքի ավագանու նախաձեռնությամբ,
4) համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 17)

Հարց 89

Գյումրի և Վանաձոր համայնքներում ե՞րբ կարող է համայնքի ավագանին համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ ներկայացնելու նախաձեռնություն ցուցաբերել.

1) համայնքի ղեկավարի լիազորություններն ստանձնելուց և անվստահության հարցը քննարկելուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո,
2) համայնքի ղեկավարի լիազորությունների ավարտման ժամկետից ոչ շուտ, քան վեց ամիս առաջ,
3) ցանկացած պահի, եթե առաջացել է նման անհրաժեշտություն:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 68)

Հարց 90

Ի՞նչ իրավունք ունի համայնքի ավագանու անդամը.

1) մասնակցել մարզխորհրդի նիստերին, եթե այնտեղ քննարկվում է համայնքին վերաբերող հարցեր,
2) ստուգումներ իրականացնել համայնքային ենթակայության հիմնարկներում և կազմակերպություններում,
3) նախապատրաստել և ավագանու քննարկմանը ներկայացնել հարցեր, որոշումների նախագծեր:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 20)

Հարց 91

Ե՞րբ է կազմվում համայնքի ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ արձանագրությունը.

1) եթե համայնքի ղեկավարն ընդունում է համապատասխան որոշում,
2) եթե համայնքի ավագանու անդամների լիազորությունների դադարեցման հետևանքով անհնարին է դառնում համայնքի ավագանու հետագա նիստերի անցկացումը,
3) եթե ավագանու նիստերը երեք անգամ անընդմեջ չեն կայացել իրավազոր չլինելու պատճառով:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 23)

Հարց 92

Ո՞ր պաշտոններն են անհամատեղելի համայնքի ղեկավարի պաշտոնի հետ.

1) համայնքի ղեկավարը չի կարող լինել մարզխորհրդի անդամ,
2) համայնքի ղեկավարը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, կամ առևտրային կազմակերպություններում, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից,
3) համայնքի ղեկավարը չի կարող լինել միջհամայնքային միավորման խորհրդի անդամ:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 25)

Հարց 93

Ի՞նչ հաճախականությամբ են անցկացվում համայնքի ավագանու նիստերը.

1) ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ,
2) ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ,
3) յուրաքանչյուր շաբաթ,
4) ամսական երկու անգամ:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 94

Ո՞վ է իրականացնում համայնքապետարանի աշխատակազմի կառավարումը.

1) համայնքի ավագանին,
2) համայնքի ղեկավարը,
3) աշխատակազմի քարտուղարը:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 33)

Հարց 95

Ի՞նչ է համայնքի բյուջեն.

1) եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է,
2) համայնքի ֆինանսական միջոցների ամբողջությունն է,
3) օրենքով ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացման երաշխիքային փաստաթուղթն է:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 83)

Հարց 96

Նշվածներից ո՞րն է համայնքի ավագանու լիազորություն.

1) հաստատում է համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը,
2) օրենքով սահմանված դեպքերում հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը,
3) սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 18)

Հարց 97

Նշվածներից ո՞րն է համարվում համայնքի բյուջեի հարկային եկամտի տեսակ.

1) տեղական տուրքերը,
2) բնապահպանական վճարներից մասհանումները,
3) պետական տուրքերը,
4) ավելացված արժեքի հարկից մասհանումները:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 86)

Հարց 98

Նշվածներից ո՞րն է հանդիսանում համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի լիազորություն.

1) կազմակերպում է համայնքի բնակիչների հաշվառումը,
2) հաստատում է համայնքի զարգացման ծրագիրը,
3) սահմանում է օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը,
4) օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների և գործառույթների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ:

(4) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 33)

Հարց 99

Նշված եկամտատեսակներից որո՞նք են համարվում համայնքի բյուջեի պաշտոնական դրամաշնորհների ձևով ստացվող հատկացումներ.

1) շահութահարկից մասհանումները,
2) պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները,
3) պետական սեփականություն հանդիսացող գույքի մասնավորեցումից կատարվող մասհանումները,
4) ավելացված արժեքի հարկից մասհանումներ:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 86)

Հարց 100

Ի՞նչ չափով կարող է նախատեսվել համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը.

1) համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտների մինչև 5 տոկոսի,
2) համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտների մինչև 20 տոկոսի,
3) համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտների 25-ից 30 տոկոսի:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 90)

Հարց 101

Նշվածներից ո՞ր մարմինն է օրենքով սահմանված կարգով ապահովում համայնքի բյուջեի կատարումը.

1) համայնքի ղեկավարը,
2) համապատասխան մարզպետը,
3) համապատասխան գանձապետական ստորաբաժանումը,
4) համայնքի ավագանին:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 38)

Հարց 102

Նշվածներից ո՞ր մարմինն է օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով իրականացնում համայնքի բյուջեի կատարման սպասարկումը.

1) համայնքի ղեկավարը,
2) համապատասխան մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությունը,
3) պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի գանձապետարանը,
4) ՀՀ կենտրոնական բանկը:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 92)

Հարց 103

Ի՞նչ նորմատիվ իրավական ակտերով են սահմանվում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները.

1) ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով,
2) ՀՀ կառավարության որոշումներով,
3) ՀՀ Նախագահի հրամանագրերով,
4) օրենքով և ՀՀ կառավարության որոշումներով:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 9)

Հարց 104

Ո՞ր իրավական ակտով է սահմանվում համայնքային ծառայողների նշանակման և զբաղեցրած պաշտոնից ազատման կարգը.

1) «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով,
2) ՀՀ աշխատանքային օրենսգիրք,

3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 29)

Հարց 105

Ինչպե՞ս է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը իրականացնում տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողությունը.

1) անմիջականորեն կամ մարզպետների միջոցով,
2) ՀՀ նախարարների միջոցով,
3) ՀՀ տեսչությունների միջոցով:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 96)

Հարց 106

Համայնքների ավագանիների նախաձեռնությամբ ինչպե՞ս են ստեղծվում և լուծարվում միջհամայնքային միավորումները.

1) համայնքների ղեկավարների որոշումներով,
2) մարզպետի որոշումներով,
3) համայնքների ավագանիների ընդունած որոշումների հիման վրա,
4) ՀՀ կառավարության որոշմամբ:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 101)

Հարց 107

Ի՞նչ իրավական ակտով են սահմանվում տեղական տուրքերի տեսակները և դրանց դրույքաչափերը.

1) ՀՀ կառավարության որոշմամբ,
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով,
3) մարզպետի որոշումներով,

(2) («Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 108

Ե՞րբ է սկսվում և ավարտվում բյուջետային տարին.

1) սկսվում է բյուջեն հաստատելու հաջորդ օրվանից և ավարտվում այդ օրվան հաջորդող 365-րդ օրը,
2) սկսվում է բյուջեն հաստատելու օրվանից և ավարտվում բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու օրը,
3) սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին,
4) սկսվում է բյուջեն հաստատելու օրվանից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

(3) («ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 109

Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում բյուջետային վարկերի և փոխատվությունների տրամադրման կարգը.

1) Ազգային ժողովը,
2) ՀՀ կառավարությունը,
3) համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
4) մարզպետը:

(2) («ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 110

Ի՞նչ կառուցվածք ունի համայնքի բյուջեն.

1) վարչական մաս և ֆոնդային մաս,
2) քաղաքական մաս և տնտեսագիտական մաս,
3) վարչարարության մաս և ֆոնդային մաս,
4) փոփոխական մաս և կայուն մաս:

(1) («ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 28)

Հարց 111

Գյումրի և Վանաձոր համայնքներում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում համայնքի գլխավոր ճարտարապետին

1) համայնքի ղեկավարը,
2) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարը,
3) ՀՀ կառավարությունը:

(1) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 58)

Հարց 112

Ովքե՞ր իրավունք ունեն մասնակցելու տեղական հանրաքվեին.

1) միայն տվյալ համայնքի բնակիչ համարվող ՀՀ քաղաքացիները,
2) ՀՀ ընտրական օրենսգրքով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին ընտրելու իրավունք ունեցող անձինք
3) համայնքի ավագանու որոշմամբ սահմանված այն անձինք, ում կարող են հետաքրքրել հանրաքվեին դրված հարցերը,
4) համապատասխան համայնքում հաշվառում ունեցող և փաստացի բնակվող 25 տարին լրացած աշխատունակ յուրաքանչյուր ոք:

(2) («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, հոդված 3)

Հարց 113

Ովքե՞ր ունեն տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունք.

1) ՀՀ Ազգային ժողովը,
2) համապատասխան մարզպետը,
3) այդ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք, ինչպես նաև տվյալ համայնքի ավագանին և ղեկավարը:

(3) («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, հոդված 7)

Հարց 114

Ո՞վ է հաստատում համայնքի զարգացման ծրագիրը.

1) համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու ներկայացմամբ,
2) համայնքի ավագանին,
3) համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համապատասխան մարզպետը, իսկ Երևան քաղաքում՝ քաղաքապետը,
4) համայնքի ավագանին՝ մարզպետի ներկայացմամբ:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 18)

Հարց 115

Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքում ո՞ր մարմիններն են սահմանում «բաժին» տեսակի կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումների հաստիքային միավորների նվազագույն թվաքանակը.

1) համապատասխան մարզպետը,
2) պետական լիազորված մարմինը, իսկ ներքին աուդիտի ստորաբաժանմանը ներկայացվող հիմնական պահանջները սահմանում է «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազոր մարմինը,
3) համայնքի ավագանին,
4) համայնքի ղեկավարը:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 33)

Հարց 116

Նշվածներից ո՞ր մարմինն է տնօրինում համայնքի բյուջեի միջոցները.

1) համայնքի ավագանին,
2) պետական կառավարման լիազորված մարմինը,
3) համայնքի ղեկավարը,
4) ՀՀ ֆինանսների նախարարությունը:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 38)

Հարց 117

Նշվածներից ո՞ր մարմինն է տալիս համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություն.

1) համապատասխան մարզպետարանը կամ Երևանի քաղաքում՝ քաղաքապետարանը,
2) համայնքի ավագանին,
3) համայնքի ղեկավարը:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 45)

Հարց 118

Ի՞նչ է համայնքը.

1) վարչական տարածք է, որի սահմաններում համայնքի բնակիչները իրականացնում են տեղական ինքնակառավարում.
2) մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն է և վարչատարածքային միավոր.
3) տեղական ինքնակառավարման մարմին է:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 4)

Հարց 119

Ի՞նչ իրավական ակտերով են սահմանվում միջհամայնքային միավորումների մարմինների առանձնահատկությունները.

1) ՀՀ կառավարության որոշումներով.
2) Ազգային ժողովի որոշումներով.
3) «Տեղական ինքնակառավարման մասին» և «Միջհամայնքային միավորումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով.
4) համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 2)

Հարց 120

Ինչպիսի՞ մարմին է համայնքի ավագանին.

1) պետական մարմին է,
2) ներկայացուցչական մարմին է,
3) գործադիր մարմին է,
4) օրենսդիր մարմին է:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 121

Ինչպիսի՞ մարմին է համայնքի ղեկավարը.

1) պետական մարմին է,
2) ներկայացուցչական մարմին է,
3) համայնքի գործադիր մարմինն է.
4) վարչական մարմին է,

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 122

Ե՞րբ է իր պաշտոնն ստանձնում արտահերթ ընտրությունների միջոցով ընտրված համայնքի ղեկավարը.

1) ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման 10-րդ օրը,
2) ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման հաջորդ օրը,
3) ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման 20-րդ օրը,
4) ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման օրը:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 123

Նշվածներից ո՞րն է տեղական ինքնակառավարման սկզբունք.

1) համայնքի բնակիչների սոցիալական ապահովությունը,
2) համայնքի բնակիչների համար աշխատատեղերի ստեղծումը,
3) համայնքի իրավունքների, օրինական շահերի և սեփականության՝ օրենքով սահմանված կարգով պաշտպանությունը,
4) համայնքի բնակիչների զբաղվածության ապահովումը:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 124

Նշվածներից ո՞րն է տեղական ինքնակառավարման սկզբունք.

1) ավագանիների առջև հաշվետու լինելը,
2) տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը,
3) քաղաքապետի առջև հաշվետու լինելը,
4) բնակիչների առջև հաշվետու լինելը:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 125

Ու՞մ որոշմամբ է հաստատվում նիստի օրակարգը.

1) համայնքի ղեկավարի,
2) համայնքի ավագանու,
3) համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի,
4) համայնքի ղեկավարի և ավագանու որոշմամբ միաժամանակ:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 126

Ի՞նչ ժամկետում է Երևանի ավագանու անդամներին տրամադրվում ավագանու նիստի օրակարգի նախագիծը, դրանում ընդգրկված հարցերի որոշման, հայտարարության, ուղերձի նախագծերը և համապատասխան փաստաթղթերը.

1) նիստը սկսվելուց առնվազն երեք օր առաջ,

2) նիստը սկսվելուց առնվազն մեկ շաբաթ առաջ,

3) նիստը սկսվելուց առնվազն երկու շաբաթ առաջ,

4) նիստը սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ:

(2) («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 27)

Հարց 127

Համայնքի ավագանու անդամը չի կարող միաժամանակ լինել.

1) գիտական աշխատող,

2) համայնքի ղեկավար,

3) ոչ առևտրային կազմակերպության ղեկավար,

4) լինել մանկավարժ:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 19)

Հարց 128

Նշվածներից ո՞րն է Երևանի ավագանու անդամի պարտականությունը.

1) ընտրողներին տեղեկացնել ավագանու նիստերի օրակարգի մասին,

2) կազմակերպել համայնքի բնակիչների հաշվառումը,

3) մասնակցել ավագանու կողմից անցկացվող Երևանի բնակիչների ընդունելություններին,

4) կազմակերպել համայնքի բնակիչների ընդունելությունը:

(3) («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 19)

Հարց 129

Ե՞րբ են վաղաժամկետ դադարեցվում Երևանի ավագանու անդամի լիազորությունները.

1) եթե նա չի ներգրավվել ավագանու որևէ հանձնաժողովի կազմում,

2) եթե նա կորցրել է համայնքի ավագանու ընտրական իրավունքը,

3) եթե նա երկու անգամ չի ներկայացել ավագանու հերթական նիստերին,

4) եթե նա չի կատարել իր ավագանու անդամի պարտականությունները:

(2) («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 20)

Հարց 130

Ե՞րբ են վաղաժամկետ դադարեցվում Երևանի ավագանու անդամի լիազորությունները.

1) եթե նա երկու անգամ չի ներկայացել ավագանու հերթական նիստերին.,

2) եթե նա չի ներգրավվել ավագանու որևէ հանձնաժողովի կազմում,

3) եթե նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել,

4) եթե նա պարբերաբար բացակայել է հերթական նիստերից:

(3) («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 20)

Հարց 131

Ո՞վ և ի՞նչ ժամկետում է ստորագրում և հրապարակում Երևանի ավագանու հայտարարությունները և ուղերձները.

1) քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը՝ տասնօրյա ժամկետում,
2) Երևանի քաղաքապետը՝ մեկշաբաթյա ժամկետում,
3) Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ մեկամսյա ժամկետում,
4) Երևանի քաղաքապետի առաջին տեղակալը՝ տասնօրյա ժամկետում:

(2) («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22)

Հարց 132

Ի՞նչ ժամկետում է Երևանի քաղաքապետը պարտավոր քննության առնել ավագանու ընդունած ուղերձը և արդյունքների մասին պաշտոնապես տեղեկացնել ավագանուն.

1) ստանալու օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում,
2) ստանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում,
3) ստանալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում,
4) ստանալու օրվան հաջորդող 10-րդ օրը:

(3) («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22)

Հարց 133

Նշվածներից ու՞մ է պատկանում Երևանի ավագանու որոշումների, ուղերձների և հայտարարությունների ընդունումը նախաձեռնելու իրավունքը.

1) Երևանի ավագանու անդամին, քաղաքապետին,
2) Ազգային ժողովի պատգամավորին,
3) վարչական շրջանի ղեկավարին,
4) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարին:

(1) («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 23)

Հարց 134

Երևանի քաղաքապետը ավագանու, իր գործունեության և Երևանի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում՝

1) ՀՀ Նախագահին,
2) ՀՀ կառավարությանը,
3) ՀՀ վարչապետին,
4) հանրությանը:

(4) («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 52)

Հարց 135

Նշվածներից ո՞ր մարմինն է պաշտոնի նշանակում Երևանի քաղաքապետի տեղակալներին՝

1) ավագանին՝ Երևանի քաղաքապետի ներկայացմամբ,
2) ՀՀ վարչապետը՝ Երևանի քաղաքապետի առաջարկությամբ,
3) ՀՀ տարածքային կառավարման նախարարը՝ Երևանի քաղաքապետի ներկայացմամբ,
4) ՀՀ Նախագահը:

(1) («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 48)

Հարց 136

Ի՞նչ է բյուջեի հավելուրդը.

1) բյուջեի եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումը,
2) բյուջեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումը,
3) բյուջեի մնացորդը,
4) բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 85)

Հարց 137

Ի՞նչ է բյուջեի դեֆիցիտը.

1) բյուջեի մնացորդը,
2) բյուջեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումը,
3) բյուջեի եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումը,
4) բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 85)

Հարց 138

Քանի՞ անդամից է կազմված Երևանի ավագանին.

1) 65,
2) 75,
3) 135,
4) 145:

(1) («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 139

Դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդը արգելվում է առանց.

1) Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվության,
2) ՀՀ առողջապահության նախարարության թույլտվության,
3) համայնքի ղեկավարի թույլտվության,
4) ՀՀ առողջապահական գործակալության թույլտվության:

(2) («Գովազդի մասին» ՀՀ օրենք, հոդված 15)

Հարց 140

Կարո՞ղ է արդյոք գովազդը լինել հեղինակային իրավունքի օբյեկտ.

1) չի կարող,
2) կարող է լինել միայն մասնակիորեն,
3) կարող է լինել՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն,
4) կարող է լինել միայն ամբողջությամբ:

(3) («Գովազդի մասին» ՀՀ օրենք, հոդված 4)

Հարց 141

Յուրաքանչյուր լրատվության միջոցը ներկայացնող քանի՞ աշխատակից կարող է հավատարմագրել պետական մարմինը.

1) ոչ ավել, քան երկու լրագրող և երկու լուսանկարիչ կամ տեսաձայնագրման երկու օպերատոր,
2) մեկ լրագրող և երկու օպերատոր,
3) երկու լրագրող, երեք լուսանկարիչ և ոչ ավել քան մեկ օպերատոր,
4) միայն տեսաձայնագրման երկու օպերատոր:

(1) (ՀՀ կառավարության 04.03.2004թ.«Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգը հաստատելու մասին» N 333-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետ)

Հարց 142

Ի՞նչ իրավական ակտերով է սահմանվում անտառային հողերի գործառնական նշանակությունը:

1) ՀՀ անտառային օրենսգրքով և անտառային հողերի օգտագործման սխեմաներով (անտառօգտագործման նախագիծ),
2) «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով,
3) ՀՀ հողային օրենսգրքով,
4) «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով:

(1) (ՀՀ հողային օրենսգրքի 25-րդ հոդված)

Հարց 143

Ի՞նչ ժամկետով է կնքվում անտառների և անտառային հողերի վարձակալության պայմանագիրը.

1) մինչև 10 տարի,
2) ոչ ավել, քան 25 տարի,
3) մինչև 60 տարի,

4) մինչև 99 տարի:

(3) (ՀՀ անտառային օրենսգրքի 50-րդ հոդված)

Հարց 144

Ի՞նչ սեփական լիազորություն է իրականացնում համայնքի ղեկավարը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում.

1) կազմակերպում է համայնքում գտնվող հողերի, անտառային և ջրային տարածքների պաշտպանությունը,
2) կազմակերպում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և դրանց վրա գտնվող համայնքային նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների և համայնքային անտառների պահպանությունը,
3) կազմակերպում է համայնքի բուսական աշխարհի, ջրային և հողային տարածքների պաշտպանությունը,
4) կազմակերպում է համայնքի կանաչ տարածքների, ջրային ավազանների և շրջակա միջավայրի պահպանությունը:

(2) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 51)

Հարց 145

Ո՞րն է նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը.

1) օրինակելի կանոնադրությունը,
2) ՀՀ կառավարության հաստատած օրինակելի կանոնադրության հիման վրա հիմնադրի (հիմնադիրների) հաստատած կանոնադրությունը,
3) պլան-գրաֆիկը,
4) աշխատանքային պլանը:

(2) («Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 146

Նախադպրոցական ուսումնական հաստատությունները կարող են լինել.

1) պետական, համայնքային ենթակայության և ոչ պետական,
2) պետական և համայնքային ենթակայության,
3) մարզային ենթակայության,
4) պետական և մարզային ենթակայության:

(1) («Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 147

Ի՞նչ կարգով են ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի անդամները մասնակցում ուսումնական հաստատության կառավարմանը.

1) չեն կարող մասնակցել ուսումնական հաստատության կառավարման աշխատանքներին,

2) խորհրդակցական ձայնի իրավունքով,
3) ձայնի իրավունքով,
4) դիտորդի կարգավիճակով:

(2) («Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 148

Ուսումնական տարին բաղկացած է՝
1) քառորդներից և կիսամյակներից,
2) կիսամյակներից, արձակուրդներից,
3) ուսումնական շաբաթներից, քննաշրջաններից և արձակուրդներից,
4) ամիսներից և շաբաթներից:

(3) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 15)

Հարց 149

Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում պետական ուսումնական հաստատության կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները՝
1) պետական ուսումնական հաստատության խորհուրդը,
2) ՀՀ կրթության և գիտության նախարարը,
3) Երևանի քաղաքապետը,
4) Երևանի ավագանին:

(1) («Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 11)

Հարց 150

Նշվածներից ո՞ր կրթությունն է պարտադիր.
1) տարրական կրթությունը,
2) հիմնական ընդհանուր կրթությունը,
3) միջնակարգ կրթությունը,
4) բարձրագույն կրթությունը:
5) («Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 18)

Աշխատակազմի բարտուղար Աննա Դանիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 17 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՕՖԻԿ ԱԼԵՔՍԱՆԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 10-ը հունիսի 2008 թվականի <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 117-Ն օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը

որոշում եմ՝

1.Ճանաչել Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի բնակչուհի Օֆիկ Ալեքսանի Մարկոսյանի /ընտանիքի գլխավորը, ծնված՝ 01/04/1932թ./ և նրա ընտանիքի անդամ՝ Զվարթ Հակոբի Հայրապետյանի /աղջիկը, ծնված՝ 09/11/1958թ./ սեփականության իրավունքը փողոց 2, փկդ. 1, տուն 1 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ կառույցների նկատմամբ:

2. Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը:

3. Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 18 Ա

ԳՈՂԹԱՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆԻ ՋԱԼԱԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ր դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը

որոշում եմ՝

Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի նախկին բնակիչ հանգուցյալ Խաչատուր Վարդանի Ջալալյանի սեփական տնամերձ հողամասին և բնակելի տանը /կադաստրային ծածկագիր՝ 10-018-004-001, տարածքը՝ 0,101 հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Գողթանիկ բնակավայր, փողոց 4, տուն 1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ